



ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

«ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿՅԱԼ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԴ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Քաղաքական բանտարկյալ» հասկացության մեկնաբանությունը տրվել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2012 թվականի 1900 (2012) որոշման¹ անկախ փորձագիտական խմբի եզրակացության² հիման վրա, որի համաձայն՝ ազատությունից զրկված անձը համարվում է քաղաքական բանտարկյալ, եթե՝

ա) ազատազրկումը՝ որպես պատիժ, նշանակվել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով և վերջինիս արձանագրություններով (ՄԻԵԿ) սահմանված երաշխիքների խախտմամբ, մասնավորապես՝ մտքի, խղճի ու կրոնի ազատության, արտահայտվելու և տեղեկատվության ազատության, հավաքների և միավորման ազատության,

բ) ազատազրկումը՝ որպես պատիժ, նշանակվել է բացառապես քաղաքական դրդապատճառներով՝ առանց որևէ կապի հանցանքի հետ,

գ) քաղաքական դրդապատճառներով ազատազրկման ժամկետը կամ պայմանները ակնհայտորեն չեն համապատասխանում հանցանքին, որի կատարման համար անձը մեղավոր է ճանաչվել կամ կասկածվում է,

դ) քաղաքական դրդապատճառներով անձը ազատազրկվել է խտրական կերպով՝ ի տարբերություն այլ անձանց, կամ

¹ <https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=18995&lang=en>

² <https://rm.coe.int/0900001680928612>



ե) ազատագրկումը նշանակվել է ակնհայտ անարդարացի դատաքննության արդյունքում և սա կապված է եղել իշխանությունների քաղաքական դրդապատճառների հետ:

Մինևույն փաստաթղթում արձանագրված է, որ այն դեպքում, երբ դատաքննությունը անարդար է եղել, իրականացվել է պետության ընթացակարգային օրենքների խախտումներով, պետք է իրականացվի նոր դատաքննություն, որը պետք է համապատասխանի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներին:

Այսպես, անձը քաղաքական բանտարկյալ է համարվում այն դեպքում, երբ խախտվում են վերջինիս արդար դատաքննության, մտքի և խղճի ազատության, արտահայտվելու ազատության իրավունքները: Վերոնշյալ իրավունքները սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով, որոնք ապահովելու և երաշխավորելու համար համապատասխան կառուցակարգեր նախատեսվում են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Մասնավորապես՝ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսվում է դատական ակտերի վերանայում վերաքննության ու վճռաբեկության կարգով և դատավճի բեկանման հնարավորություն քրեադատավարական օրենքի էական խախտման դեպքում: Բացի այդ՝ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածը նախատեսում է օրինական ուժի մեջ մտած դատավճռի բեկանման հնարավորություն այն բացառիկ դեպքերում, երբ գործի նախորդ դատական քննության ընթացքում թույլ են տրվել նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը: Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրահանգել, որ քրեական դատավարության օրենսգիրքը պարունակում է անհրաժեշտ կառուցակարգեր, օրենքի խախտմամբ կայացված դատավճիռների բեկանման և նոր դատաքննության իրականացման համար:



Նկատենք, որ միջազգային հարթակում «քաղաքական բանտարկալ» հասկացությանը անդրադարձ է կատարվել միայն վերոնշյալ փաստաթղթում և նախատեսվել են անձի քաղաքական բանտարկյալ համարվելու համար որոշ չափանիշներ, սակայն չի տրվել այս եզրույթի հստակ սահմանում, նման հասկացություն առկա չէ նաև արտասահմանյան երկրների օրենսդրություններում: Վերոգրյալից հետևում է, որ «քաղաքական բանտարկյալ» հասկացության սահմանումը օրենսդրական մակարդակում աննպատակահարմար է՝ հաշվի առնելով, որ այն իրավական հետևանքները, որոնք ԵԽ փորձագետները նշում են անձի քաղաքական բանտարկյալ կարգավիճակ ունենալու դեպքում, նախատեսված են քրեադատավարական օրենսդրությամբ: